ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը	ՀՕ-283-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Օրենք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2020.06.17/63(1618) Հոդ.764	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ Ազգային ժողով	*Ընդունման ամսաթիվը*	01.06.2020
Ստորագրող մարմինը	ՀՀ Նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	09.06.2020
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	27.06.2020	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՕՐԵՆՔԸ «ԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2020 թվականի հունիսի 1-ին

«ԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կերի մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-141-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 19-րդ կետն ուժը կորցրած ճանաչել։

2) 30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30) **կերային հավելումներ՝** կենդանիների ֆիզիոլոգիական լիարժեքության, հիվանդությունների կանխարգելման (բացառությամբ դեղամիջոցների), նրանց աճի և մթերատվության խթանման (բացառությամբ դեղամիջոցների), կերային բաղադրիչների պահպանման, օրգանիզմի կողմից կերերի սննդարար նյութերի յուրացման մակարդակի բարձրացման, նաև կերերի համային և տեխնոլոգիական հատկությունների բարելավման նպատակով կերաբաժիններին և կերերին ավելացվող բուսական, կենդանական կամ մանրէաբանական, հանքային և սինթետիկ ծագման արտադրանք կամ դրանց խառնուրդ.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հանրապետության նախագահ

Ա. Սարգսյան

2020 թ. հունիսի 9
Երևան
ՀՕ-283-Ն